

ժանօք ընթերցողաց, եւ ի յօգնութիւն տկար անձանց կիրառողաց, բաց ի բնական մահաբեր ցաւոյն, որ ի բնութիւնս մեր, եւ ամենից կենդանեաց լինիլ է հարկ՝ յիրումն սահմանեալ ժամանակի ըստորում՝ չափով եզ տէր՝ ըստ դաւթի՝ զաւուրս մեր. եւ կար զօրութեան մերոյ՝ որպէս ոչինչ է առաջի նորա, եւ ընդունայն է ամենայն մարդ մտեղի: Չի զինչ է կեննք մեր՝ եթէ ոչ՝ ընթացումն առ մահն, եւ յարգանդէ մօր՝ առ գերեզմանն դիմել. ըստորում՝ ըստ սենեքայի՝ հանապազ բառնի մասն ինչ ի կենաց մերոց. ի յաճիլն՝ նուազիմք. զայս օրս՝ ընդ մահուան բաժանեմք. եւ ի միոյ դրանէ ի մտանելս մեր ի կենսս, յայլմէ դրանէ ելանել սկսանիմք:»

«Աւստի՛ ըստ փանաքի կարեաց իմոց՝ եւ ես տգնութեամբ աշխատօղս յուսով՝ ի յառաջեկայ գործս այս, ճանապարհորդս ընդ յարգելի եղբարսդ իմ՝ ի կենցաղոյս այս ուհի ժտեմ մեծաթախանձանօք, զի ի յօգտիլն մեր ի սմանէ՛ յիշման արժանի համարեսցիք»

Դե՛ս զՅուդայեցի նոսաք  
 Բժէ՛լն՝ Պետրոս՝ որքէ՛ Յօհաննէս Բաւաթարի, որ  
 Ելա՛յ Բնակի՛մ ի Մօսկով  
 Մայրա՛տաղա՛ն Ռոսսաց:»

Սոյն յառաջարանութիւնս հինգերորդ էջն սկսելով կ'աւարտի վեցերորդ էջն վրայ, որմէ վերջն եօթներորդ էջն վրայ՝ կը սկսի Բժէլարանը:

Բժշկարանս կը բաղկանայ քսան գլուխներէ, կամ՝ ինչպէս գրուած է գրքին մէջ՝ Պրակներէ, որք այլեւայլ հիւանդութեանց յատուկ գեղորայքը կը պատուիրեն, եւ նոցա պատրաստութիւնքը կը ցուցնեն: Բաւ կը համարիմ ես նշանակել հոս միայն սոյն պրակներուն վերնագրերը, որ ամբողջ գործոյն պարունակութեան վրայ կրնան մեզ կատարեալ գաղափար մը տալ:

«Պրակ՝ Արտիկ: (էջ 7) Յաղագս փոխողական գեղոյն, լուծողական գեղորէիցն եւ գեղոյն ճճիցից:»

«Պրակ՝ Երկրորդ: (էջ 19) Յաղագս նորածին երեխայից՝ եւ փոքրիկ մանկանց՝ զանազան տեսակաւ՝ լուծող եւ ներսնային զաղտն մաքրող գեղորայս պատրաստելոյ:»

«Պրակ՝ Երրորդ: (էջ 24) Յաղագս տենդ ցաւոյն, որ պատահի կամ յամենայնում աւուր, կամ երկօրեայ, եւ կամ եռօրեայ, որ նախ զողացնէ, եւ ապա տաքութիւն ի վերայ ածէ:»

«Պրակ՝ Չորրորդ: (էջ 26) Յաղագս ջեռուցիչ ցաւոյն, որ է մշտակայ եւ անմիջելի տաքութիւն՝ որ ի զանազան կերպ մրսածութենէ պատահի:»

«Պրակ՝ Հինգերորդ: (էջ 32) Յաղագս փորագնացութեան ցաւոյն, անարիւն եւ կամ՝ արեամբ, որ յա-

ռաջանայ ի զանազան պատճառէ, զորս ի հիւանդէն հարցաբնեալ իմանալ պարտիս:»

«Պրակ՝ Վեցերորդ: (էջ 35) Յաղագս զանազան տեսակ ցաւոց ստամբոսի եւ աղեացն, որ հասարակաբար սանձը ասի:»

«Պրակ՝ Եօթներորդ: (էջ 37) Յաղագս կայուածոյ լեարդին, կամ փայծեղան եւ նիւթատու խերոցն ստամբոսին, եւ աղեացն: Յորոց յառաջանայ ցաւն գեղութեան, գեղնոյ եւ սեւոյ, եւ սէվոսյի:»

«Պրակ՝ Ութերորդ: (էջ 40) Յաղագս ջրգողութեան ցաւոյն, որ յառաջանայ ի նուազ շրջագայութենէ արեանն ի յարիւնային նրբագոյն երակունն փորոտեացն:»

«Պրակ՝ Իններորդ: (էջ 44) Յաղագս ցաւոյն միզարգելի, որ աւուրէն գողկապ ասի, ցաւս այս յառաջանայ ի պատճառէ կայուածոյ երկկամանցն, (որ պլոճիկք ասին.) եւ ջրմղուկ երակացն առ բուշան միզի:»

«Պրակ՝ Տասներորդ: (էջ 47) Յաղագս ցաւոյն սերմնակաթութեան, որ ասի սուղանակ:»

«Պրակ՝ Մեքսսաներորդ: (էջ 51) Յաղագս կանանց տեւատեսութեան արեանն կապ գալոյն:»

«Պրակ՝ Երեսներորդ: (էջ 56) Յաղագս ցաւոյն խթախտութեան, որ ըստ լատինացւոց՝ հէմորոիդէս ասի, եւ ըստ այլազգեացն բարասիլ, կամ՝ մայասիլ ասի:»

«Պրակ՝ Երեսներորդ: (էջ 59) Յաղագս պօղազրայ ցաւոյն, որ լինի յօղուածս ոտիցն, եւ ի մասունս խաղալեացն:»

«Պրակ՝ Չորսներորդ: (էջ 61) Յաղագս մշտաուե ստոտիկ գլխացաւութեան, որ յառաջանայ ի զանազան պատճառէ: Յաղագս լուսնոտութեան ցաւոյն:»

«Պրակ՝ Հինգերորդ: (էջ 65) Յաղագս աչաց, ախանջաց, առաման, եւ ուլան ցաւոյն:»

«Պրակ՝ Վեցերորդ: (էջ 70) Յաղագս բարակացաւոյն՝ որ վէրէմ ասի:»

«Պրակ՝ Եօթներորդ: (էջ 73) Յաղագս ուկրաբեկութեան. կամ՝ խաղալեաց յօղուածոց ոսկերացն՝ ի տեղոյն դուրս անկման եւ կամ ջլաց ոլորման:»

«Պրակ՝ Ութերորդ: (էջ 76) Յաղագս զանազան տեսակ վերաց, յարտաբուստ յանձն ումք եղելոց:»

«Պրակ՝ Իններորդ: (էջ 79) Յաղագս բորտութեան՝ կամ քոսոտութիւն անուանեալ ցաւոյն:»

«Պրակ՝ Բսներորդ: (էջ 82) Յաղագս նորագիւտ կաթիլ գեղոյ միոյ՝ պահպանող առողջութեան անձին, (որ լատիներէն կոչի, էլիքսիլ անթիփէսթիլէնցիալէ.) այսինքն՝ կաթիլ, պահպանող առողջութեան եւ կենի, եւ գեղ՝ ընդդէմ մահտարածամ ցաւոյն:»

Յետ սոյն քսան պրակաց, որք ինչպէս բնիք յառաջագոյն, զանազան հիւանդութեանց յատուկ այլեւայլ գեղերը միայն կը քարոզեն, Քալանթարեան՝ «այսքան առ այսորիկ բաւ է» վերջագրով կը գրէ հետեւեալ վերջարանութիւնը:

«Արդ՝ զայս քանս՝ ի կիրառութիւն գործոց բժշկականաց՝ ըստ զանազան տեսակաց ցաւոց՝ համառօտապէս գեղորէից գրութեամբ՝ յարմարօրէն գործածութեան կերպիւն՝ յըսկզբէն մինչ ցրվախձան աշխատութեանս՝ բաւական համարիմ՝ ընդհանուր արժանապատիւ ազգիս մերոյ